Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ ԳՆԵԼ ՍԱՆՈՍՅԱՆԻ՝ ԱՐԱԲԱԿԱՆ ՄԻԱՑՅԱԼ ԷՄԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ (ԴՈՒԲԱՅ) ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. **<u>ԳՈՐԾՈՒՂՎԱԾ ՊԱՇՏՈՆԱՏԱՐ ԱՆՁ</u>**

   Գնել Սանոսյան:

2. **<u>ԳՈՐԾՈՒՂՎԱԾ ԱՆՁԻ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏ</u>ՈՆԸ**

   ՀՀ Գեղարքունիքի մարզպետ:

3. **<u>ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ և ԺԱՄԿԵՏՆԵՐԸ</u>**

   Արաբական Միացյալ Էմիրություններ (Դուբայ), 2019 թվականի փետրվարի 8-11-ը:

4. **<u>ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԸ</u>**

   «Ռոյալ Ֆռոնտ» ՍՊԸ:

5. **<u>ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ</u>**

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետ Գնել Սանոսյանը «Ռոյալ Ֆռոնտ» ՍՊԸ-ի հրավերով 2019 թվականի փետրվարի 8-ից 11-ը աշխատանքային այց է կատարել Արաբական Միացյալ Էմիրություններ (Դուբայ):

Աշխատանքային այցի հիմնական նպատակն է եղել՝ հանդիպել «Ռոյալ Ֆռոնտ» ՍՊԸ-ի ղեկավար կազմի հետ՝ քննարկելու «Ռոյալ Ֆռոնտ» ՍՊԸ-ի և ՀՀ Գեղարքունիքի մարզի միջև հնարավոր համագործակցությանն առնչվող հարցեր:

6. **<u>ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐԸ</u>**

Հանդիպման ընթացքում քննարկվել են «Ռոյալ Ֆռոնտ» ՍՊԸ-ի և ՀՀ Գեղարքունիքի մարզի միջև հնարավոր համագործակցությունը: Հնարավոր համագործակցության ոլորտներն են՝ զբոսաշրջության զարգացում, գյուղատնտեսություն՝ ոչխարաբուծություն, շինարարություն, էներգետիկա և երկկողմ հետաքրքրություն ներկայացնող այլ հարցեր:

7. <u>ԵՐԿԿՈՂՄ ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ</u>

Այցի ընթացքում ՀՀ Գեղարքունիքի մարզպետ Գնել Սանոսյանը հանդիպումներ է ունեցել «Ռոյալ Ֆռոնտ» ՍՊԸ ղեկավար կազմի, Դուբայի տնտեսական զարգացման վարչության՝ ներդրումների խթանման բաժնի տնօրենի և Չինաստանի մեքենաշինական կորպորացիայի բիզնեսի զարգացման կենտրոնի ներկայացուցիչների հետ:

ՀՀ Գեղարքունիքի մարզպետ Գնել Սանոսյանը հանդիպումների ընթացքում «Ռոյալ Ֆռոնտ» ՍՊԸ ղեկավարությանը, Դուբայի տնտեսական զարգացման վարչության ներդրումների խթանման բաժնի և Չինաստանի մեքենաշինական կորպորացիայի բիզնեսի զարգացման կենտրոնի ներկայացուցիչներին ներկայացրել է ՀՀ-ում տեղի ունեցած թավշյա հեղափոխությունից հետո ներդրումային ոլորտում իրականացված փոփոխությունները, որոնք հնարավորություններ են ընձեռում ներդրումներ կատարել ՀՀ-ում: Ներկայացվել են Գեղարքունիքի մարզում առկա հնարավորությունները՝ բոլոր ծրագրերը համատեղ իրականացնելու համար:

8. <u>ՁԵՌՔԲԵՐՎԱԾ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԺԱՄԿԵՏՆԵՐԸ, ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ</u>

Երկկողմ հանդիպումների արդյունքում ստորագրվել է արձանագրություն ՀՀ Գեղարքունիքի մարզպետի և Արաբական Միացյալ Էմիրությունների (Դուբայ) «Ռոյալ Ֆռոնտ» ՍՊԸ-ի ղեկավարների հանդիպման մասին:

Այցի ընթացքում Գնել Սանոսյանը բոլորին հրավիրել է Հայաստան՝ մասնակցելու ապրիլին Գեղարքունիքի մարզում կայանալիք բիզնես համաժողովին, ինչպես նաև տեղում ծանոթանալու հնարավոր ծրագրերին:

ՀՀ Գեղարքունիքի մարզպետ Գնել Սանոսյանի՝ Արաբական Միացյալ Էմիրություններ (Դուբայ) աշխատանքային այցը կարևորվում էր հաշվի առնելով այն հանգամանքը, որ վերջինս նպաստելու է ՀՀ Գեղարքունիքի մարզում նոր ներդրումներ ներգրավելուն և նոր աշխատատեղեր ստեղծելուն:

ՀՀ Գեղարքունիքի մարզպետ՝ Գնել Սանոսյան

12.02.19թ.